# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՀՀ ք. Երևան երկու հազար տասնչորս թվականի ապրիլի տասնութին

Մենք՝ Արտակ Փայլակի Յայլոյանս անձնագիր [redacted] տրված՝ 24.10.2006թ. 008-ի կողմից հաշվառված՝ ք. Երևան Խակոմի 50/1 շ. 27 բն. (այսուհետ՝ վաճառող) և Պողոս Գևորգի Փլավչյանս անձնագիր [redacted] տրված՝ 14.06.2011թ. 004-ի կողմից հաշվառված՝ Բաղրամյան պ. շ.-2-40 բն. (այսուհետ՝ գնորդ)

Կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

1.Վաճառողը վաճառեց Երևան քաղաքի Արաբկիր Մ. Բաղրամյան պողոտայի 76 /յոթանասունվեց/ շենքի թիվ 2 /երկու/ հասցեի 0.19459 հա հողամասի 924/3437.6 բաժնեմասից 0,0064 հա (112/3437.6) բաժնեմասի հողամասը ըստ հատակագծի, իսկ գնորդը գնեց Երևան քաղաքի Արաբկիր Մ. Բաղրամյան պողոտայի 76 /յոթանասունվեց/ շենքի թիվ 2 /երկու/ հասցեի 0.19459 հա հողամասի 924/3437.6 բաժնեմասից 0,0064 հա (112/3437.6) բաժնեմասի հողամասը ըստ հատակագծի, ամբողջությամբ:

2.Վաճառվող անշարժ գույքը բաղկացած է 0.19459 հա հողամասի 112/3437,6 բաժնեմասից /բնակավայրերի/:

3. Նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային սպասարկման գրասենյակի կողմից 10.04.2014թ. տրված թիվ 10042014-01-0168 սեփականության վկայականի:

4.Վաճառվող անշարժ գույքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում՝ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևան տարածքային ստորաբաժանման Արաբկիր սպասարկման գրասենյակի կողմից 18.04.2014թ. տրված թիվ ՄՏ-18042014-01-0118 միասնական տեղեկանքի:

5.ՀՀ գույքահարկի մասին օր-ի 8-րդ հոդվածի համաձայն՝ նոր սեփականատիրոջն է անցնում օտարման պահի դրությամբ անշարժ գույքի համար չմարված հարկային պարտավորությունները:

6.Նշված անշարժ գույքը վաճառվել է 1.100.000 /մեկ մլն հարյուր հազար/ ՀՀ դրամով, որը ստացա ես վաճառողս գնորդից ամբողջությամբ:

7.Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված են գնորդի կողմից:

8.Կողմերը պայմանավորվում են, որ վաճառողը անշարժ գույքը կհանձնի գնորդին մինչև 04.2014թ.:

9. Համաձայն ՀՀ քաղ. օր-ի 563 հոդվածի՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում 30/ երեսուն/ օրվա ընթացքում:

10. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 5 օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Վաճառող՝

Գնորդ՝

Երկու հազար տասնչորս թվականի ապրիլի տասնութին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Դանիելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև օտարվող գույքի նկատմամբ՝ Արտակ Փայլակի Ցայլոյանի իրավունքները ստուգված են: Համաձայն ՀՀ քաղ. օր-ի 563 հոդվածի՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30/երեսուն/ օրվա ընթացքում:

Գրանցված է սեղմամատյանում 2205.

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար:

ՆՈՏԱՐ Ս. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ